ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵՆԻ

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՍԱՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱԲԱԹ 23 ՅՈՒՆՈՒԱՐ 1865 — ԹԻՒ 745

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՒՌՆԻԱ, 23 ՅՈՒՆՈՒԱՐ

Լրագրոյս նախընթաց թուովը զրուցեցինք, թէ Գաղղիոյ Արքունութեան պաշտօնէին կողմանէ շրջաբերական նամակ մի յուղարկեցաւ բոլոր գաղղիացի եպիսկոպոսաց, որոց կարգիլէ զհրատարակութիւնը Դեկտեմբերի 8-ին (ըստ նոր տումարի) գրուած պապական կոնդակին առաջին մասին, յառաջ բերելով թէ անիկա կայսերութեան սահմանադրական սկզբանցը հակառակ առաջարկութիւններ կը պարունակէ։

Այս արդէլքին դէմ զանազան կերպիւ ու քիչ կամ շատ խստութեամբ գրուած բողոքներ եղան 'ի կողմանէ տասնեօթ վիճակաւոր Առաջնորդաց. որոյմէ երեքը՝ կարդինալ են, չորսը՝ արքեպիսկոպոս և տասը՝ եպիսկոպոս։ Այս առաջնորդներէն երկուքը՝ այսինքն Պէզանսօնի եպիսկոպոսը և Մուլէնի եպիսկոպոսը բոլորովին չուզելով հնազանդիլ կառավարութեան հրամանացը, իրենց առաջնորդանիստ քաղաքաց մայր եկեղեցեաց մէջ կարդացեր են պապական կոնդակը։ Ուստի այս անհնազանդութեան պատճառաւ, յիշեալ երկու եպիսկոպոսները 'ի դատ հրաւիրուեցան տէրութեան խորհրդոյն առջև. որուն ինչ վճիռ տալը յետ այսորիկ պիտի իմանամք։

Եպիսկոպոսաց այս ընդդիմադրութիւնը պատճառաւորեաց Գաղղիոյ լրագրաց՝ նորէն յարուցանելու և քննել [illegible]կատարեալ բաժանումը Եկեղեցւոյն 'ի Տ[illegible]։ Լրագրապետներէն շատերը կը պնդեն թէ մրչափ ժամանակ որ այս երկու իշխանութիւնները՝ այսինքն կրօնականը և աշխարհականը, իրարմէ կատարելապէս զատուած պիտի չըլլան, մշանջենաւոր ընդդիմամարտութիւն պիտի ըլլայ միշտ 'ի մէջ կրօնական ընկերութեան և քաղաքական ընկերութեան։ Եւ այս ընդդիմամարտութիւնը՝ ժամանակին տարաղայլոյը համեմատ, առաւել կամ նուազ բռնութեամբ երևան պիտի ելլէ։

Պապական կոնդակը, որուն վրայօք լրագրութիւնները երկար խորհրդածութիւններ կընեն, ամենադժուար կացութեան մը մէջ կը դնէ Գաղղիոյ կղերը 'ի ներկայութեան բացայայտ և պաշտօնական մաքառումին 'ի մէջ ժողովրդական իրաւանց, զոր Գաղղիոյ կառավարութիւնը կը պաշտպանէ, և Աստուածային իրաւանց՝ զոր Հռոմի աթոռը կը ներկայացնէ։ Օրինիօն Նասիոնալ լրագիրը հետևեալ կերպիւ կը բացատրէ այս ամենադժուար կացութիւնը։ Գաղղիոյ եպիսկոպոսները արդեօք Սահմանադրութեան հնազանդ և պապական կոնդակին դէմ են, կը սէ, թէ պապական կոնդակին հնազանդ և Սահմանադրութեան դէմ են։ Եթէ պապական կոնդակին հնազան և Սահմանադրութեան դէմ ըլլան՝ տէրութեան օրինացը հակառակ ընթացք մի ունեցած կը ըլլան. հետևաբար մատնիչ և ապստամբ համարուելով, կը պատժուին ըստ քաղաքական օրինաց։ Եթ ընդհակառակն, եթէ Սահմանադրութեան համեմատ վարուելով, պապական կոնդակին մէջ քարոզուած սկզբունքը 'ի գործ չդնեն, որբազան Քահանայապետին անհնազանդ եղած պիտի ըլլան և պիտի պատժուին Եկեղեցւոյն Դանոնական օրինացը համեմատ։

Բարձրապատիւ Նաբոլէոն իշխանին՝ կայսերական մասնաւոր խորհրդոյն նախագահի փոխանորդ կարգուիլը առանց քաղաքական նշանակութեան չէ։ Ընդհակառակն շատերը մեծ կարևորութիւն կընծայեն այս բանին և կը պնդեն թէ գաղղիացւոց կայսրը՝ իր հօրեղբօր որդւոյն այս բարձր պաշտօնը յանձնելով, ուզեց իր ազատասիրական քաղաքականութեանը ապացոյց մի տալ, որով ազգայնութեանց իրաւունքին խնդիրը հաւանականաբար նոր զօրութիւն մի պիտի ստանայ և Պապին աշխարհական իշխանութեան խնդիրը մեծապէս պիտի տկարանայ։

Կըսուի թէ մօսիւ Պէնէտէթթին Իտալիոյ թագաւորանիստ մայրաքաղաքը պիտի երթայ մեծ դեսպանի պաշտօնիւ, ինչպէս որ Ընդղեա և Աստրիա կը ղրկուի։ Եւ այս կերպիւ Գաղղիոյ կայսերական կառավարութիւնը մեծ տէրութեանց կարգը դրած պիտի ըլլայ Իտալիոյ կառավարութիւնը։

Եկամտից տեսուչ մօսիւ Ֆուլ իւր տարեկան յայտագիրը մատոյց Նաբոլէոն կայսեր 'ի մասին տէրութեան եկամտից և ծախուց։ Այս յայտագիրը խիստ բարի տպաւորութիւն մի ըրաւ հասարակութեան վերայ թէ՛ Գաղղիոյ մէջ և թէ՛ Ընդղիոյ մէջ։ Լոնտոնի Մորնինկ Բոսթ օրագիրը հետևեալ խորհրդածութիւնը կընէ յիշեալ յայտագրին վրայօք.

"Տարակոյս չկայ թէ այս յայտագիրը խիստ գոհացուցիչ վիճակի մէջ կը ներկայացնէ Գաղղիոյ զանձուց այժմեան կացութիւնը նմանապէս և ապագային ակնկալութիւնները, և եթէ պատերազմական արտաքոյ կարգի ծախուց հետզհետէ նուազեցնու համար մօսիւ Ֆուլին ըրած առաջարկութիւնը 'ի գործ դրուի, յայտնի է որ տուրքերը ևս մեծապէս պիտի նուազին։ Այժմ խաղաղութեան մէջ եմք և ամենևին պատճառ մի չեմք տեսներ որ վախ տայ մեզ անոր վրդովուելուն. ուստի Եւրոպան կրնայ կատարեալ ապահովութեամբ իւր սուրը պատեանին մէջ դնել"։

Ընդեանները զրուցուեցաւ թէ Ընդղեան և Գաղղեան միաք ունին իրրև անկախ տէրութիւն մի ճանաչել և ընդունիլ Ամերիկայի հարաւային վիճակաց դաշնակցութիւնը. սակայն Լոնտոնի Դայմզ օրագիրը սուտ կը հանէ այս լուրը և կը յաւելու թէ անգղեացի ազգը իւր կատարեալ հաւանութիւնը տուած է օտար տէրութեանց գործոցը չխառնուելու քաղաքականութեանը, որուն կը հետևի միշտ Մեծին Բրիտանիոյ կառավարութիւնը։

Յայտնի է որ վեհափառ Վիքթորիա թագուհին, իւր ամենասիրելի ծակցին բարձրապատիւ Ալպերթ իշխանին մեռնելէ ետև որ երեք տարի կը ելլայ, չուզեց անձամբ զահախօսութիւն ընել բարլամենթին բացուելուն առթիւը։ Այս տարի տէրութեան պաշ-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայոց եկեղեցւոյն հալածիչք, ուրացողք. բաժանեալք եւայլն։

(Տես լրագրոյս 734, 736 եւ 737 թիւերը։

Ցամի տեառն

35 Անանէ և Սանատրուկ թագաւորք հալածիչք
107 Արտաւազդ արքայ որդի, նահատակիչ Ոսկեանց
150 Բառահլա նահատակող Սուրբասանց
215 Խոսրով թագաւոր՝ նահատակող Գրիգորենկից
287 Տրդատ թագաւոր՝ հալածող և նահատակիչ
315 Արևորդի Հայք՝ 'ի Միջագետս եւայլուր
320 Շապուհ արքայ Պարսից հալածող Հայոց զամս 70
381 Մեհրուժան, Վասակ, և այլ ուրացող հալածիչք
428 Հակառակաթոռ կաթուղիկոսք, Սուրմակ Բզբիւղոյ, և Շմուէլ զամս 9
430 Հելթանոսամիտ Հայք՝ 'ի Գողթան և 'ի Դարոյման և այլուր
440 Երկրորդ Հոգկերտ թագաւոր Պարսից հալածող Հայոց զամս 17
450—500 Վասակ Սիւնի, Վարազ Վաղան, Գաղիշոյ, Գղիհոն Սիւնի և այլ ուրացող հալածիչք
560 Յովհաննան հայ աղանդաւորք 'ի զանազան տեղիս
590 Նեստորական Հայք ոմանք, որք և զղիրս ինչ թարգմանեցին յԱսորոյ 'ի հայս
600 Յովհաննէս երրորդ՝ հակառակաթոռ կաթուղիկոս զամս 16
630 Սարգիս՝ աշակերտ Յովհաննու մայրավանեցւոյ
645 Արևորդի Հայք բաղմայեալք
Յունաղուան Հայք կամ Հայնոռոմք, յերկիրս Յունաց. որոց շառաւիղք կան մինչեւ ցայսօր 'ի փոքր Հայաստան։
680 Պաւլիկեան հայ աղանդաւորք 'ի զանազան տեղիս
788 Ստեփաննոս առաջին՝ կաշառընտիր կաթուղիկոս 'ի Դուին
850—1080 Սմբատ Աբարայ՝ հեղինակ Թոնդրակեցւոց, յորս յիշին Դաւիթ, Թորոս, Անանէ, Սարգիս, Կիւրեղ, Նահապետ, Սահակ, Յովսէփ, Յեսու, Ղազար, Յակոբ, Կոնծիկ, Վրվէս, Մովսէս, Գրիգոր, Տրիտատ, եւայլք։
850 Բուզայ ստոիկան հալածող Հայոց զամս 5
902 Յուսուսի ոստիկան հալածող Հայոց զամս 20
940 Յակոբ և Խոսրով հերձեալ եպիսկոպոսք Սիւնեաց
1035 Դաւոսկորոս հակառակաթոռ կաթուղիկոս յԱնի զամս 2
1071 Գէորգ Լոռեցի անարժան կաթուղիկոս 'ի Թաւրիզ զամս 2
1073 Սարգիս հակառակաթոռ կաթուղիկոս 'ի Հոնի զամս 14
1077 Թէոդորոս հակառակաթոռ կաթուղիկոս 'ի Մարաշ զամիսս վեց
1115 Դաւիթ հակառակաթոռ կաթուղիկոս յԱղթամար, որում յաջորդեն եւայլք մինչև ցայսօր
1170 Արևորդի հայք նուազեալք
1180 Բարսեղ հակառակաթոռ կաթուղիկոս յԱնի, զամս 23
1203 Անանիա հակառակաթոռ կաթուղիկոս 'ի Սեբաստիա զամս 4
1287 Կոստանդին կաստուկեցի առաջին ծխատիրոջ լատինացեալ կաթուղիկոս 'ի Սիս
1294 Գրիգոր անաւարտեցի ծխատիրոջ լատինացեալ կաթուղիկոս
1327 Յակոբ սսեցի ծխատիրոջ լատինացեալ կաթուղիկոս
1330 Լատինահայ ունիթոռք 'ի Հայաստան և այլուր, որ յետ իրր 150 ամաց չքացան
1350 Հայհոռոմք 'ի զանազան տեղիս բազմացեալք
1380 Լանկ Թեմուր հալածիչ Հայոց զամս 25
1415 Իսկանդար բռնաւոր հալածիչ հայոց զամս 20
1439 Յովսէփ սսեցի անարժան կաթուղիկոս
1442 Գրիգոր Մուսապեկեանց ապստամբ կաթուղիկոս 'ի Սիս, որոյ յաջորդք տիրեն մինչև ցայսօր
1603 Շահ Աբաս առաջին՝ հալածող հաւատոյ Հայոց զամս 25 (և գերիչ հին Զուղայեցւոյ յԱրազ, այն է Ասպահան նոր Զուղայ)։
1630 Նիկոլ հերձեալ եպիսկոպոս Իվովու, որում յաջորդեն եւայլք մինչ ցայսօր
1644 Եղիազար հակառակաթոռ կաթուղիկոս յԵրուսաղէմ զամս 18
1700 Սկիզբն բաժանման այժմեան լատինահայոց 'ի հաւատոյ և յեկեղեցւոյ մերմէ
1717 Մխիթար վարդապետ սեբաստացի, որ բաժանեալ 'ի հաւատոյ մերմէ, սահմանէ 'ի Վենետիկ զվանս կրօնաւորաց և լատինադաւան Հայոց. որում մինչև ցայսօր յաջորդեն և այլ վանահարք։
1723 Աբրահամ վարդապետ առաջնորդ Տրապիզոնի, որ հերձեալ յեկեղեցւոյ մերմէ երթայ սահմանէ 'ի լեռան զվանս կրօնաւորաց, և յետ ամաց ինչ հրամանաւ Պապին Հռոմայ կարգի կաթուղիկոս

տունէից խորհուրդը խոնարհաբար աղերսամատոյց եղաւ Նորին Վեհափառութեանը, որ առաջիկայ Փետրուարի 7–19ին բացուելու բարձրագոյն մէջ բարեհաճի դահլիճս անձամբ կարդալու 'ի միխիթարութիւն ժողովրդեան։ Բայց թագուհին, որուն սպալի տխրութիւնը փոքրիկ կը տանէ, իւր պաշտօնէից խնդիրը չընդունեցաւ կրսեն, և հրամայեց որ իրեն տեղը՝ իւր թագաժառանգ որդին բարձրապատիւ Կալլէսի իշխանը կարդայ այս տարուան դահլիճը։ Այս տնօրէնութեանը վերայ նորէն խօսք մի տարածուեցաւ թէ Անգլիոյ վեհափառ թագուհին կուզէ թագաւորական դահլէն հրաժարիլ։

Նիւ–Յորքէն հասած լուրերը թէպէտև օգտակար են միշտ Հիւսիսային զօրաբանակին, որ զանազան յաղթութեամբք յառաջ երթալու վերայ է, այսու ամենայնիւ Հարաւային վիճակայ դաշնակցութիւնը, ըստ երևմանց, տակաւին բաւական զօրութիւն ունի յաջողութեամբ դէմ դնելու իւր թշնամւոյն յարձակմանցը։ Պատճառ է որ Սաւաննահ ամուր քաղաքին տիրելով, Հիւսիսայինք մեծ յաջողութիւն մի ձեռք բերին, սակայն Ուիլմինկթըն ծովեզերեայ քաղաքին առջև գործ մի չկրցան տեսնել և պարտաւորեցան առայժմ ետ քաշուիլ։ Թէպէտև այս նաւահանգիստը Հիւսիսային նաւատորմիղէն պաշարուած է և անոր բերդը կը դնտակոծուի ծովու կողմանէ, բայց հաստատուն կերպիւ հասկցուեցաւ որ անհնար է նոյն բերդին տիրել, առանց ցամաքի կողմանէ զօրաւոր արշաւանք մի ըլլալու։

Հարաւային այս նաւահանգիստին կարևորութիւնը հասկցնելու համար, բաւական է ծանուցանել որ անցեալ տարի երկու միլիոն լիրայի չափ աբժողութեամբ բամպակ վաճառուեցաւ յիշեալ քաղաքը, և անկէց Անգլիա յուղարկեցաւ։ Կը հասատատեն (և այս բանը զարմանալի է), թէ Ուիլմինկթընի նաւահանգիստը առնուազն օրը երկու շոգենաւ կը մտնէ և երկու շոգենաւ կելլէ, թէպէտև 40 կտոր Հիւսիսային պատերազմական նաւերե պաշարեալէ։

Աթէնքի Անգլիոյ դեսպան վսեմաշուք միստր Լիրսքին անցեալները երկար յայտագիր մի յուղարկեց Մեծին Բրիտանիոյ արտաքին գործոց տեսուչ լորտ Ճոն Ռասէլին 'ի մասին Յունաստանի այժմեան գործոց։ Այս յայտագրոյն մէջ, ուրիշ բաներէ 'ի զատ յիշատակութիւն եղած է հասարակապետական հակամիտութեանց վրայօք, որոնք ժամանակ առ ժամանակ երևան կելլեն թէ՛ Աթէնքի մէջ և թէ՛ նահանգաց մէջ։

Ի պատասխանի այս յայտագրոյն, լորտ Ճոն Ռասէլ իմացուց որոշապէս թէ Մեծին Բրիտանիոյ կառավարութիւնը, համաձայնութեամբ միւս երկու պաշտպան մեծ տէրութեանց, հետևեալ պայմաններով միայն՝ անկախ և պզտա տէրութիւն մի կը ճանաչէ զՅունաստան։ Նախ՝ պէտք է որ սահմանագրական թագաւորէ մի կառավարուի։ Երկրորդ՝ այս թագաւորը Դէորդ առաջինը պիտի ըլլայ, զոր Հելլենացի ազգը ընտրեց, պաշտպան տէրութիւնները ընդունեցին զնա, և 'ի շնորհս անոր՝ հաւանութիւն տուին Յոնիական կղզեաց Յունաստանի հետ միաւորութեանը։

Այս պատասխանը բարի տպաւորութիւն մի ըրաւ Յունաստանի խաղաղասէր ժողովրդեան վերայ և հասարակապետական կուսակցութեանց յանդուգն և խռովասէր ընթացքը մեծապէս չափաւորեց։

Թէպէտև աւազակութիւնը ջնջելու համար ամեն ջանք 'ի գործ դրուեցան կառավարութեան կողմանէ, այսու ամենայնիւ, դժբաղդաբար, Յունաստանի այս պատուհասը շատ նահանգաց մէջ կը շարունակուի տակաւին։ Ընդհակառակը Նէմէի մօտ, աւազակաց խումբ մի զօրագնդի մը վերայ յարձակեցաւ, որ 30 հազար տրախմի կը տանէր 'ի Կորնթոս։ Այս դրամը յափշտակուեցաւ յիշեալ չարագործներէն և գենուոր մի սպանուեցաւ դիմադրական կուռոյն մէջ։ Բայց ամենէն ցաւալին՝ հոչակաւոր Ռիցոս աւազակապետին Ադիկէի մէջ վերստին երևան ելլելն է։ Այս եղեռնագործը մօտերս անշարժ ստացուածքի տէր Աթինայի մը բռնեց լեռը տարաւ, և անորմէ 30 հազար տրախմի փրկանք կը պահանջէ։

Յունաստանի թագաւորին հօրեղբայրը, Տանիմարքի բարձրապատիւ Ալֆրեդոս իշխանը, որ շատ ժամանակէ 'ի վեր կը ոպասուէր, անցեալ շաբթու հատաւ և թագաւորական պալատը օթեվանեցաւ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ընդարական օրինադիրքին 3որդ, 6երորդ և 7երորդ յօդուածոց համեմատ, իրաքանչիւր վաճառական պարտաւորեալէ օրհաշիւ տետրակ մի ունենալ, որուն մէջ նշանակուած պիտի ըլլան ամեն օրուան ըրած իւր առևտրական գործողութիւնները։ Այս տետրակը սկսուելէն յառաջ՝ պէտք է որ թերաւհամար դրուի անոր թերթերուն վերայ և վաւերացուի՝ վաճառականութեան ատեանէն կարգուած պաշտօնատարէ մի։ Նմանապէս ամեն տարուոյն վերջը յիշեալ տետրակը պէտք է որ վաւերացուի նոյն պաշտօնատարէն։

Այն օրհաշիւ տետրակը՝ որուն թերթերուն վերայ այս կերպիւ թուահամար չէ դրուած, դատաստանի առջև անոր հատատ չկրնար ընծայուիլ։ Այսու ամենայնիւ մինչև ցայսօր շատ վաճառականներ այս դատաստանական կարգադրութիւնը 'ի գործ չդրին։ Ուստի այս բանը, առևտրական հաշուոյ դատերը տեսնելու համար, նմանապէս սնանկացեալ վաճառականաց հաշիւները կարգադրելու համար, ամեն կերպ դժուարութեանց և կասկածանաց մէջ կը ձգէ դատաւորները։

Այս անկանոնութեան և այս վիճակին վախճան մը տալու համար, տեղանաւորները (սարաֆ), նմանապէս անոնք ամենքը որ վաճառականութեամբ զբաղեալէն, պէտք է օրհաշիւ տետրակ մի ունենան, զոր կը պարտաւորին, ներկայ տարւոյս Յունուարէն սկսեալ, վաւերացնել տալ առևտրական ատեանէն, և անոնք որ հոգ չեն տանիր այս բանին, յիշեալ ատեանին նախագահը կը ծանուցանէ, թէ անոնց տետրակներուն հատատ պիտի չընծայուի դատաստանական դէպքերուն մէջ։

Իզմիր, 9 Յունուար 1865։

Հետևեալ տեղեկութիւնները Կոստանդնուպոլսեն գրուած են Իզմիրի Լիբերալ անուն լրագրոյն։

Յայտնի է որ, Կ. Պոլսոյ Յունաց ազգային ժողովը անցեալները որոշում մի ըրաւ մարդ գլուխ 6 ղուրուշ տուրք առնելու Յունաց պատրիարքարանին իշխանութեանը ներքև գտնուողներէն 'ի հաստատումն ազգային հին և նոր պարտուց։ Այս որոշման գործադրութեան դժուարութեանց վերայ, նոր տեսակ դժուարութիւն մի յաւելցաւ կամ լաւ է ըսել ցաւալի երկպառակութիւն մի ծագեցաւ յիշեալ խառն ժողովոյն մէջ, որ բաղկացեալէ ութ եկեղեցական անդամներէ և 8 աշխարհական անդամներէ։

Մօտերս այս ժողովոյն մէջ, արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց տարեկան վարձքը աւելցնելու խնդիրը յուզուեցաւ, որոնք երեք կարգի կը վերաբերին։ Առաջին կարգի եպիսկոպոսները տարին 120 հազար ղուրուշ կընդունին, երկրորդ կարգինները 90 հազար ղուրուշ և երրորդ կարգի [illegible]ները 70 հազար ղուրուշ։ Իսկ Պոլսոյ [illegible] տարեկան վարձքը՝ 500 հազար ղուրուշէ։ Ընդհանրապէս Յունաց կղերին տարեկան ծախքը 6 միլիոն ղուրուշի կը հասնի այժմ։ Իսկ եթէ այս ամսականները աւելցնելու առաջարկութիւնը 'ի գործ դրուելու ըլլայ, յիշեալ տարեկան ծախքը գրեթէ 10 միլիոն ղուրուշ պիտի ըլլայ։

Յունաց ազգային ժողովոյն եկեղեցական անդամները ամսականաց աւելցնելու խնդիրը միաբան հաճութեամբ որոշելէ ետև, Բարձրագոյն Դրան ներ-

---

լատնայեալ Հայոց, որումն այլք յաջորդեն անդ մինչև ցայսօր նովին բաժանմամբ։

1801 Դաւիթ լուսոյ բանաւոր կաթուղիկոս Այնժմիածին զամս 6

Արժանայիշատակ անձինք, գործք, դիպուածք, շինուածք եւայլն։

Ցամի տեառն

1 Զորրորդ ամ Ծննդեան Քրիստոսի՝ առաջին տարի, սովորական ամոյ առաջին, վեցերորդ տարի 'ի թագաւորութեան Արգարու 'ի Մծբին, երրորդ ամ թագաւորութեան Տիգրանայ կրասերոյ 'ի Վերին Հայաստանի։

2 Արգար գնայ 'ի Հռովմ, պատուեալ 'ի կայսերէ յետ երից ամաց դառնայ 'ի Մծբին։

3 Ապստամ Արծրունի թագաւորէ 'ի Վերին Հայս զամս 14։

14 Արգար նորոգէ զԵգեսեայ, և անդր փոխէ զաթոռ իւր և զդիւանն զամս 18

18 Զենոն Արտաշէզ թագաւորէ 'ի Վերին Հայս, 17

29 Արգար գրէ նամակ առ Յիսուս տէր և հրաւիրէ զնա գալ առ ինքն։

Յիսուս Քրիստոս զնամակ, զպատկեր և խոստումն իւր առաքէ առ Արգար և ինքն գոլով հիմն և հիմնադիրն ամենայն եկեղեցեաց՝ ինքնին արկանէ զառաջին հիմն եկեղեցւոյ իւրոյ յազգս Հայոց։

30 Թովմաս առաքեալ մին յ12ից, մնի հիմնադիր Հայաստանեկեղեցւոյ, նախ գրելով նամակ 'ի բերանոյ Քրիստոսի առ Արգար երկրորդ՝ առաքելով զեղբայրն իւր զԹադէոս յԵդեսիա առ 'ի լուսաւորել զազգ մեր, և երրորդ յետ նահատակութեանն զաշխարհ ընդ սուրբ Հոգւոյն 'ի հինգ դարուն 'ի Հայաստան, և բնակելով նախ յԱշտիշատ 'ի Տարաւնդ, և ապա 'ի Ռշտունի մօտ 'ի գիւղն Պարթիս, ուր Արծրունի իշխանք մեր շինեն զմեհեանսն, որ և կայ մինչև ցայսօր առ ծովեզն Աղթամարայ, Թովմայի տաճարելոյ վանք կոչեցեալ։

31 Թադէոս առաքեալ գայ յԵդեսիոյ ընդ իւր բերելով զգեղարդն կողին Քրիստոսի, մկրտէ զԱրգար և զայլ բազումս, ձեռնադրէ եպիսկոպոս զԱդդէ՝ Զաբարիայ, և զԹէոփիլոս՝ ընդ յոլով քահանայից, քարոզէ 'ի մեծ և 'ի փոքրն Հայաստան, աշակերտէ զՍուքիասեանս, զԱնդոսիա կոյս, և զայլ բազումս և յետ հիմնելոյ և հովուելոյ զեկեղեցի Հայոց զամս 19, բաղում ընկերօք նահատակի 'ի Շուշան յԱրցախս գաւառի յամի Տեառն 50։ Արծաթապատ գլուխ և ոսկի Թադէոսի և սուրբ գեղարդն Քրիստոսի մինչև ցայսօր պահին 'ի սբ Էջմիածին։

33 Սիմոն կանանայի՝ մի յ12ից յետ շրջելոյն յարևմուտս գայ 'ի Հայաստան քարոզէ 'ի բաղումս տեղիս, և նահատակեալ Թադի 'ի գաւառին Ռշտունեանց մօտ 'ի քաղաքն Ռուսթայ. որ կայր 'ի Թիկանց Որմի քաղաքին։

41 Ի սրբոյ Ոսկեանց և 'ի Սուքեասեանց տահմանի յազգիս՝ անապատական կեանք. զոր ապա յանձին բերեն և բազումք 'ի Հայոց։

50 Եղիշէ աշակերտ Թադէոսի՝ եպիսկոպոս ձեռնադրեալ Յերուսաղէմ գայ և քարոզէ 'ի Վերին Հայաստան և յԱղուանս, շինէ զեկեղեցիս ձեռնադրէ զքահանայս, և զեպիսկոպոս, ապա քարկոծմամբ կատարեալ յԱրցախս գաւառի 'ի Դաշտակն արքունի, թաղի 'ի գեղն Գիա 'ի տեղջն որ կոչեալ Հոմկնք, որ յետ ժամանակաց 'ի յայտնիլն սուրբ նշխարացս շինի եկեղեցի, և ապա վանք հռչակաւոր, որ կայ մինչև ցայսօր 'ի Ղարապաղ մօտ յայժեանն Նուխի քաղաքն, 'ի գեղն Գիս կամ Բեզ կոչեցեալ, ուր և զսահի արծաթապատ Ա. սրբոյն։

60 Սահակ աշակերտ Թադէոսի եպիսկոպոս ձեռնադրեալ քարոզէ 'ի մեծն Հայաստան, լուսաւորէ զբազումս, և նահատակեալ Թադի 'ի Բազք գաւառի Սիւնեաց, և 'ի վերայ նշխարացն շինի վանք Ցամեաց, որ կայ մինչ ցայսօր։

62 Բարդուղիմէոս առաքեալ մին յ12ից գայ 'ի Հայաստան՝ բերեալ զզգեստիկ Աստուածածնայն, բազում զամս 4 'ի Սիւնիք 'ի Հեր և յԱրևանդ եւայլն։ ձեռնադրէ զքահանայս և զկոմսն՝ եպիսկոպոս 'ի Գողթն, շինէ զեկեղեցիս 'ի Վանանդ և յՈրդվատ և զՀոգեաց վանս մօտ 'ի Կանդուրտ յԱնձուտայիս, ուր հանգուցեալ զզգեստիկ Աստուածածնին՝ հաւարէ զկուսան կանայս և զքահանայս, ապա երթայ 'ի յԱրևանս քաղաք, զարձուցանէ զգոյր և զհաղորդասէս Սանատրկայ և զայլ յոլովս, և ընդ նոսա նահատակի 'ի Բալմ կոչեցեալ տեղւոջ, ուր յետ 'ի վերայ նշխարաց շինի եկեղեցի և վանք, որ և կայ մինչև ցայսօր Լ.Ա.զրակ 'ի Ճուլամերկ գաւառի վանայս Վանաբա զարի. իսկ արծաթապատ ոսկի սրբոյն կայ և այժմ յԷջմիածին։

65 Յուդա Թադէոս կամ Ղուկաս մին յ12ից քարոզէ

կայացուցին զայն։ Սակայն բարձրապատիւ Ալի փաշան այս որոշման աղերսագիրը կարդալու ժամանակը միանգամայն բողոքագիր մը ընկալաւ որ ստորագրեալէր յիշեալ ժողովոյն ութ աշխարհական անդամներէն, որոնք կը բողոքէին ժողովոյն մէկ մասին ըրած որոշմանը դէմ։ Այս բողոքագրոյն մէջ յառաջ բերուած իրաւունքներն են նախ՝ այժմեան ազգային ծանր հարկերը՝ որովհետև բեռնաւորուած է ժողովուրդը. երկրորդ ցաւալի երկպառակութիւնները, որոց պատճառ պիտի տայ այս հարկերուն աւելնալը։ Բողոքարկու անդամոց զրուցածները շուտով հաստատուեցաւ Փիլիպէ Յոյն բնակչաց կողմանէ եկած աղերսագրովը. որոնք յայտնապէս կը ծանուցանեն թէ ազգային հարկերուն առաւելութիւնը մեծ դժուարութիւններ և նեղութիւններ պիտի պատճառէ։

Եթէ այս վերջին տասնըհինգ ամաց պատմութեանը ուշադրութիւն մատուցուելու ըլլայ, զարմանալի ընդդիմամարտութիւն մի կրտեսնուի. որ կը թիւրէ 'ի մէջ ժողովրդեան և Յունաց կղերին. ընդդիմամարտութիւն, որուն գլխաւոր պատճառը դրամն է։ Ազգային սնտուկին այժմեան պարտքը, յայտնի ապացոյց մըն է որ բարեկարգութիւնը փշրհաստատուն չէ մնացած պատրիարքարանի վարչութեան մէջ։ Ամեն օգտակար կազմաւորութիւնները, զորս աշխարհական անդամները աշխատեցան 'ի գործ դնելու, մեծ ընդդիմութիւններու պատահեցան 'ի կողմանէ օրթոդոքս եկեղեցւոյն գլխաւոր պաշտօնականներէն. և այս ընդդիմութիւնը՝ ինչպէս որ կը տեսնուի, տակաւին մօտ չէ իւր վախճանին։

Կոստանդնուպոլսէն կը գրեն մեզ.

"Յաւօք որոյ կը ծանուցանեմ բարձրապատիւ ծովակալ Մէհէմմէտ փաշային անակնկալ մահը, որ Յունուարի 8ին ուրբաթ դիշեր, ըստ Տաճկաց ժամը [illegible]ին պատահեցաւ. Նորին Բարձրութիւնը ամ[illegible] ցէն 'ի վեր, պաղրսաք ուփունէթի կոչուած հ[illegible]գութեան սաստիկ կերպիւ ենթակայանալով, թ[illegible]անի մը վարպետ բժշկներու ձեռամբ զօրաւ[illegible]ներ եղան, 'ի վերայ այսր ամենայնի նոյն [illegible]տանդաւոր հիւանդութիւնը մէկ քանի տուրը մէջ հոկայաքայլ յառաջ երթալով, բոլոր բժշկաց ձիլերը և դպրմանները ամենևին օգուտ մի չբերին։

"Հանդուցեալ Մէհէմմէտ փաշային յուղարկաւորութեան ախուր հանդէսը՝ ըստ կամաց վեհափառ Սուլթանին տարօրինակ փառաւորութեամբ և պատուով կատարուեցաւ, ու մարմինը ամփոփուեցաւ Թոփխանայի մօտ Բըլըճ Ալի փաշա կոչուած մզկիթին քով քարաշէն շիրմի մը մէջ, որ Թոփխանայի Հալիլ փաշային հրամանաւ պատրաստուած էր։

"Օսմանեան տէրութեան մէջ Մէհէմմէտ փաշայի նման դոբծունեայ, աշխոյժ և հաւատարիմ բարձր պաշտօնեի մը վրայ անպատրոյն մահուան ըրած այս սոսկալի հրաւուածը՝ ոչ միայն վեհափառ Սուլթանին սիրտը, այլև Պոլսոյ մէջ գտնուող հաղարաւոր անձանց սիրտերը մեծ տխրութեան մէջ ձգեց"։

ԱՕԳԱՑԻ,

Կը լսեմք թէ Կ. Պոլսոյ սրբազան Պատրիարքին և ազգային Վարչութեան կողմանէ կրօնական ժողովոյն նախագահ տէր Ներսէս եպիսկոպոսը, Բերայի սուրբ Երրորդութեան եկեղեցւոյն քարոզիչ տէր Խորէն վարդապետը՝ ընկերութեամբ Բերայի թաղական խորհրդոյն ատենապետ Գազարեան Յակոբ ազգային նոր տարին շնորհաւորելու համար՝ Յունուարի 1ին ըստ նոր տումարի. այցելութեան դպրեր են Գաղղիոյ և Աւստրիոյ վեսմափայլ դեսպանաց. յորոց մարդասիրաբար ընդունուեր են։

Այս բարեպատեհ առթիւ, կարծեմք թէ անհրաժեշտ պարտք մըն էր Ընդդեմ դեսպանատունն ևս այցելութեան երթալ։ Թէպէտև տարեգլուխը կիրակի օր մի պատահած ըլլալուն՝ յիշեալ դեսպանատունը այցելութիւն չընդունիր, այսու ամենայնիւ ազգային Վարչութիւնը և սրբազան Պատրիարքը ներկայացնող մեծարգոյ անձինքը կրնային իրենց այցելութեան տոմսակները ձգելու. որով ազգային քաղաքավարական պարտքը կատարուած կը ըլլար նաև Մեծին Բրիտանիոյ դեսպանատան նկատմամբ՝ որ օսմանեան տէրութեան հզօր և գըլխաւոր դաշնակիցներէն մէկն է։

Իզմիրի Վասպուրական թատրոնը այս տարի տարաբաղդութեամբ գոց կը մնայ, և մեր Հայ երիտասարդները Քամարանոյի եւրոպական թատրոնը կը յաճախեն ու կը զուարճանան իտալական օպերաներ մակիկ ընելով։

Կոստանդնուպոլսէն կը գրեն, թէ Արևելեան Հայ թատրոնը բաւական ժամանակ հայկական ներկայացումներու համար գոց մնալէ ետև, այժմ շաբաթը մէկ կամ երկու անգամ հայերէն թատրերգութիւններ կը ըլլան եղեր Հայ դերասանաց և դերասանուհեաց խմբի մը միջոցաւ։ Սակայն կը լսեմք թէ հասարակութիւնը, գժբաղդաբար, քաջալերութիւն չմատուցաներ իւր բազմաթիւ անդամոց ներկայութեամբը։ Եւ եթէ այս ընթացքը, որ ազգասիրութեան հակառակ է, շարունակուելու ըլլայ, տարակոյս չկայ թէ յիշեալ դերասանական խումբը պիտի չկրնայ յաջողիլ, և իւր ջանքը ապարդիւն պիտի ըլլայ, որ անշուշտ մեծ պատիւ չբերէր ազգային յառաջադիմութեանը փափաքող Հայ երիտասարդաց։

Պարոն Աստուածատուր Պէրժէ Տփխիսի Ռուսաց կառավարութեան մեծ պաշտօնակալը, որ առանձին խնամքով մը եռեռէ է արևելեան տեղեկութեանց, ցուցակ մը շիներ է Կովկասային երկիրներուն մէջի հայազգի ժողովրդեան։ Նոյն ցուցակն ընդունելով իրմէն Վիքթոր Լանկլուա՝ ուսումնական և հայերէն լեզուին հմուտ դաղղիացին, մեզի յուղարկեց փափաքելով որ Բազմավէպիս միջոցաւ հաղորդեմք։

		Ընդհ. բնակ.	Հայք առհ.
Կառավարութիւն	Տփխիսի	542,201	104,090
"	Պաքուի	778,120	125,961
"	Երևանի	403,452	209,130
"	Խութայիսի	345,419	38,668
Տաղստան .	.	.	489
Սթաւրափոլ	.	.	15,625
	գումարն	2,069,192	493,963

Որով բոլոր Կովկասային երկիրներուն մէջի բնակչաց ընդհանուր Հայոց թիւն է 493,963
որոց մէջ Հռոմէականք են 14,323
իսկ Կաթուղիկոսականք 479,640

Ասով կը տեսնուի որ Կովկասային երկիրներուն բնակչաց հարիւրին 26ուերեքն մեր ազգայինք են։

Բազմավէպ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ, 20 ՅՈՒՆՈՒԱՐ

Կայսերական հրովարտակաւ հետեւեալ պաշտօնական բաշխութիւնները և փոփոխութիւնները եղան։

Օղոստափառ Սուլթանին բանակի օգնական և ծովապետութեան խորհրդոյն նախագահ Հաճի Վէսիմ փաշան՝ մեծ ծովապետ անուանեցաւ միշերութեան աստիճանաւ, փոխանակ հանգուցեալ Մէհէմմէտ փաշային։

Ծովապետութեան խորհրդոյն նախագահութիւնը հանդերձ ֆէրիքութեան աստիճանաւ Լիասիմ փաշային յանձնուեցաւ, որ օղոստափառ Սուլթանին բանակի օգնական է և Թալեա կոչուած կայսերական շքեղանաւոյն հրամանատարն էր։

Թէհրանի նախորդ օսմանեան դեսպան Հայտար էֆէնտին, նոյն պաշտօնիս Վէննա պիտի երթայ։ Այս առթիւ մեծազօր կայսրը հաճեցաւ Պալա կոչուած բարձր աստիճանը շնորհելու անոր։

Ընդարութեան բարձրագոյն ատենին անդամ վեսմափայլ Խայրուլլահ էֆէնտին՝ օսմանեան դեսպան անուանեցաւ 'ի Թէհրան.

Պրուսայի ընդհանուր կաւավարչի պաշտօնը՝ վեսմափայլ Համտի փաշային յանձնուեցաւ։

—Ամսոյս 7ին հինգշաբթի օրը Պէյօղլուի զինուորական դպրոցին մէջ, կառավարութեան զանազան դպրոցաց աշակերտաց պարգևաբաշխութեան հանդէսը մեծ շքեղութեամբ կատարուեցաւ 'ի ներկայութեան օղոստափառ Սուլթանին։ Եւ այս բարեպատեհ առթիւ պարապային յարմար քանի մը առենախօսութիւններ եղան։

—Օսմանեան կառավարութիւնը անցեալ շաբթու շրջաբերութեան մէջ գրաւ պղինձէ նոր դրամը՝ զոր Օսմանեան կայսերական Դրամանոցին միջոցաւ շինել տուած է Փարիզի ու Ընդդեմ մէջ։ Այս դրամը մէկ զուրուշնոց, քսան փարանոց, տասը փարանոց և հինգ փարանոց կոտորակներ են, հին պղինձէ դրամոց ձևովը շինուած։

Որովհետև կառավարութիւնը միտք ունի Պէշլիք կոչուած դրամները շրջաբերութենէ քաշել, ուստի հարկ եղաւ որ անոր տեղը այս պղինձէ դրամները հանէ 'ի գիւրութիւն առևտրական փոքրիկ գործոց։

—Հեռագրական հաղորդակցութիւնները գիւրացնելու համար՝, որոնք օրըստօրէ աւելնալու և մեծ կարևորութիւն ստանալու վերայ են մանաւանդ Ռումելիի մէջ, կայսերական կառավարութիւնը արժան համարեցաւ անոնց գիները նուազեցնելու և նոր բարեկարգութիւններ հաստատելու հեռագրական վարչութեան մէջ։ Օսմանեան հեռագրական

'ի Միջագետս և 'ի մեծն Հայս, Հանդիպի Բարգուզիմիս 'ի տեղ ոչն Օթեաց խաչ, ապա յՈրմի քաղաքի Ուշտունեանց՝ Նահատակեալ թագի։

117 Տասն հաղար զինուորք Հայոց 'ի խաչի բեւեռեալ վասն հաւատոց Նահատակին 'ի լեառն Սբարատ կամ Մասիս, որպէս պատմէ Յոսեմ աւուրքն լատինաց 'ի 22 Յունիսի։

151 Իշխանք Սիւնեաց Զթանահատի վասն 'ի Վայոց ձոր. որոյ վանահայր կարգի Մխիթար ոմն վար.

197 Վաղարշ թագաւոր շինէ գրաղաքն Վաղարշապատ և անդ փոխէ զաթոռն 253։ Խոսրով շինէ գրաղաքն Դարբէժ։

257 Ծնանի Գրիգորիս զոր յամին 286 չարչարէ Տրդատ և ընկենու 'ի խորվիրապն Սբատշատ։ Սուրբ Գրիգոր ձեռնադրի կաթուղիկոս, մկրտէ զՏրդատ և բոլոր ազգս Հայոց. ձեռնադրէ զեպիսկոպոս և զքահանայս, սահմանէ զձկամ՝ զսոնս, և զայլ սրբազան արարողութիւնս եկեղեցւոյ, շինէ զտուրբ Էջմիածին (զոր լինի աթոռ կաթուղիկոսաց զամս 150) և զվանորայս Հռիփսիմեանց, Գայիանեանց, Գլաձոյ, և այլ անթիւս եւայլն, եւայլն, և 'ի միանձանց ընդ իւր բերելոց սահմանէ յաղագս զբովանդակ կրօնաւորութիւն. զոր ապա յանձն առին և անհամարք 'ի Հայոց մինչև յայսօր. անթիւ ձեռագիր մատեանք հնութեանց կորնչին ընդ մեհենաց կռոց։

325 Առաջին տիեզերական ժողով 'ի Նիկիայ, ուր զտանի և Արիստակէս կաթուղիկոս, և բերէ ընդ սահմանս և զկանոնս 'ի Հայս։

338 Գրիգորիս որդի Վրթանէսի կարգի կաթուղիկոս Հայոց Աղուանից, որում յաջորդեն եպիսկոպոսք մինչև ձեռնադրեալք 'ի հայրապետաց մերոց. բայց այդ կաթուղիկոսութեան Աղուանից դադարեալ յամին 1819, փոխեցաւ 'ի Մեծարապետութիւն։

340 Վրթանէս կաթուղիկոս 'ի Մամբրէ Պատրիարքէն Երուսաղէմայ առեալ զտուրբ ծէսս և արարողութիւնս մուծանէ յեկեղեցի մեր։

348 Խոսրով շինէ զԴուին, և անդ փոխէ զաթոռն։

360 Մկիտար Հայ եպիսկոպոս Սեբաստիոյ՝ նոսի պատրիարք Յունաց յԱնտիոք։

367 Կարգին չորք Մեծարապետք Հայոց 'ի Սեբաստիա 'ի Մելիտինէ 'ի Նէրկերտ և ապա 'ի Սիւնիք։

381 Երկրորդ տիեզերական ժողով 'ի Կ. Պոլիս, ուր զտաւ և մեծն Ներսէս և բերեալ զսահմանս և կանոնս նորա՝ զարդարէ զեկեղեցի մեր. զորացողն Մեհրուժան այրէ զամենայն Յոյն և Ասորի մատեանս 'ի Հայաստան դուռեալ։

390 Գառնիկ ճգնաւոր զտանէ զմարմին սուրբ Լուսաւորչի. զոր հանգուցանեն 'ի Թորդան, բայց արծաթապատ Ա.Ջ սրբոյն համբուրի մինչև ցայսօր յԷջմիածին։

406 Աստիկոս Հայ սեբաստացի նոսի Պատրիարդ Յունաց 'ի Կ. Պոլիս զամն 12. սուրբ Մեսրոպ զտանէ զյատուկ գիրս Հայոց. որով Աստուածաշունչն եւայլ անթիւ մատեանք սուրբ հարց՝ թարգմանին 'ի Հայ լեզու. պայծառանան եկեղեցիք և զարդք, սահմանին Մաշտոց՝ Ժամագիրք, Շարական, Տօնացոյց եւայլն։

(Մնացորդը յաջորդ թուով։)

թեամբը։ Եւ եթէ այս ընթացքը, որ ազգասիրութեան հակառակ է, շարունակուելու ըլլայ, տարակոյս չկայ թէ յիշեալ դերասանական խումբը պիտի չկրնայ յաջողիլ, և իւր ջանքը ապարդիւն պիտի ըլլայ, որ անշուշտ մեծ պատիւ չբերէր ազգային յառաջադիմութեանը փափաքող Հայ երիտասարդաց։

Պարոն Աստուածատուր Պէրժէ Տփխիսի Ռուսաց կառավարութեան մեծ պաշտօնակալը, որ առանձին խնամքով մը եռեռէ է արևելեան տեղեկութեանց, ցուցակ մը շիներ է Կովկասային երկիրներուն մէջի հայազգի ժողովրդեան։ Նոյն ցուցակն ընդունելով իրմէն Վիքթոր Լանկլուա՝ ուսումնական և հայերէն լեզուին հմուտ դաղղիացին, մեզի յուղարկեց փափաքելով որ Բազմավէպիս միջոցաւ հաղորդեմք։

		Ընդհ. բնակ.	Հայք առհ.
Կառավարութիւն	Տփխիսի	542,201	104,090
"	Պաքուի	778,120	125,961
"	Երևանի	403,452	209,130
"	Խութայիսի	345,419	38,668
Տաղստան .	.	.	489
Սթաւրափոլ	.	.	15,625
	գումարն	2,069,192	493,963

Որով բոլոր Կովկասային երկիրներուն մէջի բնակչաց ընդհանուր Հայոց թիւն է 493,963
որոց մէջ Հռոմէականք են 14,323
իսկ Կաթուղիկոսականք 479,640

Ասով կը տեսնուի որ Կովկասային երկիրներուն բնակչաց հարիւրին 26ուերեքն մեր ազգայինք են։

Բազմավէպ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ, 20 ՅՈՒՆՈՒԱՐ

Կայսերական հրովարտակաւ հետեւեալ պաշտօնական բաշխութիւնները և փոփոխութիւնները եղան։

Օղոստափառ Սուլթանին բանակի օգնական և ծովապետութեան խորհրդոյն նախագահ Հաճի Վէսիմ փաշան՝ մեծ ծովապետ անուանեցաւ միշերութեան աստիճանաւ, փոխանակ հանգուցեալ Մէհէմմէտ փաշային։

Ծովապետութեան խորհրդոյն նախագահութիւնը հանդերձ ֆէրիքութեան աստիճանաւ Լիասիմ փաշային յանձնուեցաւ, որ օղոստափառ Սուլթանին բանակի օգնական է և Թալեա կոչուած կայսերական շքեղանաւոյն հրամանատարն էր։

Թէհրանի նախորդ օսմանեան դեսպան Հայտար էֆէնտին, նոյն պաշտօնիս Վէննա պիտի երթայ։ Այս առթիւ մեծազօր կայսրը հաճեցաւ Պալա կոչուած բարձր աստիճանը շնորհելու անոր։

Ընդարութեան բարձրագոյն ատենին անդամ վեսմափայլ Խայրուլլահ էֆէնտին՝ օսմանեան դեսպան անուանեցաւ 'ի Թէհրան.

Պրուսայի ընդհանուր կաւավարչի պաշտօնը՝ վեսմափայլ Համտի փաշային յանձնուեցաւ։

—Ամսոյս 7ին հինգշաբթի օրը Պէյօղլուի զինուորական դպրոցին մէջ, կառավարութեան զանազան դպրոցաց աշակերտաց պարգևաբաշխութեան հանդէսը մեծ շքեղութեամբ կատարուեցաւ 'ի ներկայութեան օղոստափառ Սուլթանին։ Եւ այս բարեպատեհ առթիւ պարապային յարմար քանի մը առենախօսութիւններ եղան։

—Օսմանեան կառավարութիւնը անցեալ շաբթու շրջաբերութեան մէջ գրաւ պղինձէ նոր դրամը՝ զոր Օսմանեան կայսերական Դրամանոցին միջոցաւ շինել տուած է Փարիզի ու Ընդդեմ մէջ։ Այս դրամը մէկ զուրուշնոց, քսան փարանոց, տասը փարանոց և հինգ փարանոց կոտորակներ են, հին պղինձէ դրամոց ձևովը շինուած։

Որովհետև կառավարութիւնը միտք ունի Պէշլիք կոչուած դրամները շրջաբերութենէ քաշել, ուստի հարկ եղաւ որ անոր տեղը այս պղինձէ դրամները հանէ 'ի գիւրութիւն առևտրական փոքրիկ գործոց։

—Հեռագրական հաղորդակցութիւնները գիւրացնելու համար՝, որոնք օրըստօրէ աւելնալու և մեծ կարևորութիւն ստանալու վերայ են մանաւանդ Ռումելիի մէջ, կայսերական կառավարութիւնը արժան համարեցաւ անոնց գիները նուազեցնելու և նոր բարեկարգութիւններ հաստատելու հեռագրական վարչութեան մէջ։ Օսմանեան հեռագրական

գծից ընդհանուր տեսուչ վսեմաշուք Աղաթոն էֆէնտին ամեն հնարաւոր ջանք 'ի գործ կը դնէ այս կարեւոր գործոյն բարեկարգութեամբ յառաջադիմելուն և զարգանալուն համար։

—Վ. էննայի նախորդ օսմանեան գեսպան Ռալիմաքի—Պէյը՝ Օսմանիէ կարգին առաջին աստիճանի շքանշանաւ պատուեցաւ, և 7500 ղուրուշ ամսական թոշակ ընդունելով՝ գործքէ պիտի քաշուի։

—Նորին կայսերական Վ. եհափառութիւնը Օսմանիէ կարգին առաջին աստիճանը շնորհեց նորընտիր մեծ ծովապետ Վ. էսիմ փաշային, և նոյն կարգին երկրորդ աստիճանը շնորհեց Ռասիմ փաշային, որ ծովապետութեան խորհրդոյն նախագահ է։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Արտաքին գործոց պաշտօնեայ բարձր, Հալի փաշային կողմէն այս օրերս Պատրիարքարանս պաշտօնական գիր եկաւ, որով արքունի բժշկական դպրոցի աշակերտներէն մէկը գաղտնապէս ամուսնանալուն առթիւ կը յայտնէ թէ, որովհետև սոյն աշակերտաց ամուսնութիւնը իրենց դպրոցական ուսման ընթացքին արգելք և միանգամայն նոյն դպրոցին կանոնաց ալ հակառակ է, Արդարութեան բարձր ատեանին վճռով որոշուեր է թէ այսուհետև նոյն դպրոցի աշակերտներէն ամուսնացող ուզողը մինչև որ ուսման ընթացքը չաւարտէ և ձեռքը արտօնագիր մը չունենայ ամուսնութեան հրման չտրուի։ Այս հրամանը ինչպէս որ միւս բոլոր Պատրիարքարանաց նոյնպէս ալ մեզ եկած ըլլալով՝ անոր դրծագրութեան հոգ պիտի տարուի. նոյնը ի պաշտօնէ հրատարակել արժան դատուեցաւ ի գիտութիւն հասարակութեան։

—Կիմանանք որ, ազգային Վ. արչութեան խառն ժողովը սուրբ Նշուսաղէմի կանոնագիրը խմբագրելէն ետև՝ սուրբ Նշուսաղէմայ սբբազանՊատրիարք Հօր և Վ. անօրէից խորհրդոյն ալ կարծիքը հարցուցեր է։ Ուստի յուսալի է որ մօտ օրերս ընդհանուր ժողով գումարուելով թէ՛ այս կանոնագրին և թէ՛ կտակաց՝ թաղական խորհրդոց և ուրիշ կանոնագրութեանց վաւերացումը կխնդրուի։

Կիլիկիա։

ՀԱՆԱՐԱՆ ԼՐԱՏԷՐ

Զմիւռնիա, 23 Յունուար։

Նահանգիս ընդհանուր կառավարչէ վսեմափայլ Ռաշիտ փաշան, որուն՝ հասարակութեան բարօրութեանը համար ունեցած հայրական խնամքը յայտնի է ամենուն արժան համարեցաւ Տաւրի մէճլիսի անուամբ նոր ժողով մի հաստատել, ուր պիտի տեսնուին հասարակաց զանազան դատերը։ Մինչև այսօր այս ամեն դատերը Մէճլիսի Քէպիր կոչուած՝ նահանգական մեծ ժողովը միայն կը տեսնէր. հետևաբար գործերը կը յապաղէին և շատ ուշ կը լրանային։

Այս նորահաստատ ժողովը, որ ամեն օր նիստ պիտի ընէ բաց 'ի ուրբաթ օրերէն, մեծապէս պիտի օգնէ ընթացիկ գործքերուն շուտով լրանալուն, և իւր դատավճիռները հիմնեալ պիտի ըլլան տեղութեան ընդհանուր կանոնաց վերայ։ Գիտել արժան է որ, Տաւրի մէճլիսին ամենեին միջամուխ պիտի չըլլայ այն գործքերուն, որոնք իրենց յատկութեանցը համեմատ, արդէն հաստատեալ ատեաններէն կախում ունին։

Այս ժողովոյն մշտատև անդամները արդէն կարգուեցան. որոնք են Ղէմիսլ—Պէյը՝ որ մեր ընդհանուր կառավարչին մասնաւոր պաշտօնակալներէն մէկն է։ Ռաշիտ—Պէյը՝ որ քաղաքիս մէջ եղած տէրութեան երկիրներուն տեսուչն է, Տիրան էֆէնտին՝ որ տեղական կառավարութեան թարգմանն է. ասոնցմէ 'ի զատ երեք խորհրդոյ քարտուղար մնայնակից պիտի ըլլան այս ժողովոյն։ Մէճլիսի Քէպիրին անդամներէն երկու հոգի, նմանապէս նոյնպէս, հետզհետէ ներկայ պիտի գտնուին Տաւրի մէճլիսին իւրաքանչիւր նիստին։

Մեր վսեմափայլ կառավարչին շրջաբերական մէկ գրութեամբը քաղաքիս հիւպատոսաց տեղեկութիւն տրուեցաւ այս տնօրէնութեանց վրայօք։

—Քաղաքիս ոստիկանութեան տեսուչ մեծաշուք Եսէն աղային գործունեայ խնամքը դրամանենգաց (գալպագան) ընկերութիւն մի երևան ելաւ մօտերս Պայընտրի մէջ, ուր այս չարագործները արծաթի Մէճիտ կը շինէին։ Այս խարդախեալ դրամներէն մահմէտական ոսխտատորաց (հաճի) քով շատ մը գտնուելով, Եսէն աղան հարցափորձ ըրաւ և խնայաւ թէ Պայընտրէն առեր են. ուստի անմիջապէս հարկաւոր եղած տեղեկութիւնները և հրամանները զրկեց 'ի Պայընտր. ուր դրամանենգները շատով ձեռք անցան և Իզմիր բերուեցան իրենց քովը եղած գործիքներովը և 50 հատ խարդախեալ Մէճիտ դրամով։

Այս դրամանենգութեան գլխաւորներն են Մահմուտ անունով Պարսիկ մի և Հիւսէին էֆէնտի կոչուած մէկը. որոց ընկերներուն անունները հետևեալներն են՝ Օսման Բուսմէլիէն, Մահմուտ և Մէհմէտ Փոքր Ասիայէն և Թէհտորոս՝ Մօռայէն։ Ասոնց ամենքն պարտաւորեցան խաստովանիլ դրամանենգութեան իրենց յանցանքը. հետևապէս պիտի պատժուին ըստ օրինաց։

—Մօտերս Պուռնովայի մէջ ևս հինգ չարագործ տնձինք բռնուեցան. որոցմէ մէկը կրնասցի և մ'ևս չորը Պուռնովայի են։ Ասոնք Իզմիր բերուելով և հարցաքննուելով խաստովանեցան։ Թէ ինչ հոգիէ բաղկացեալ աւազակաց խմբի մը կը վերաբերին և կը պատրաստուէին Յունուարի 17ին կ'ըսեն դիշերը յիշեալ գիւղը մեծաշուք Ասիա—Պէյին տունը կոխելու։

—Մեր նախընթաց թղթոյն մէջ ծանուցինք թէ Ֆէվզիսի Օսմանիէ կոչուած ընկերութեան շրջենաւորէն Իզգէտտին անուն դեղեցիկ շրջենաւը՝ Միտիլի միայն մերձենալով երևելիութիւն կընէ Իզմիրի ու Կ. Պոլսոյ մէջ, և այս ճանապարհորդութիւնը 20 (կամ 24) ժամու մէջ կը կատարէ։ Այժմ նոյն ընկերութեան վերարերեալ ուրիշ նոր շրջենաւ մի ևս Բէյլրի Շերէֆ անուն սկսաւ յիշեալ երթևեկութիւնը ընելու՝ հանդիպելով Կէլիպոլը, Դարդանէլ, Պապա և Մարմարոնի։

Իզգէտտին շրջենաւը Իզմիրէն կը մեկնի ամեն ուրբաթ և Կ. Պոլսէն ամեն երեքշաբթի օրերը. իսկ Բէյլրի Շերէֆ շրջենաւը Իզմիրէն ամեն երեքշաբթի և Կ. Պոլսէն ամեն շաբաթ օրերը կը մեկնի։

Այս շրջենաւաց գործակալութիւնը Իզմիրի մէջ՝ Մարկոսեան մեծարգոյ Պետրոս էֆէնտին յանձնուած է, որ իւր սովորական գործունեայ ջանքերը 'ի գործ կը դնէ իւր պաշտօնը ամենայն յաջողութեամբ։

—Օգոստափառ Սուլթանը բարեհաճեցաւ Մէճիտէ կարգին երրորդ աստիճանի շքանշանը շնորհելու մեծաշուք Աբբաս Ղուլի խանին, որ Իզմիրի Պարսից ընդհանուր հիւպատոսն է։

—Օսմանեան առաջադոյն կառավարութիւնը՝ ըստ ազգերանոց ազգային Վ. արչութեան. բարեհաճեր է 50 հազար ղուրուշ ողորմութիւն մատուցանելու 'ի նպաստ հայոց ազգի հրկիզելոց Պրուսայի։

—Կը լսենք, թէ Եղիպտոսի նախկին առաջնորդ Հանէսեան դերասանապետ Յակոբ եպիսկոպոսը Գաղատիոյ առաջնորդ կարգուեր է։

—Իտալիոյ վեհափառ Վիքթոր—Էմմանուէլ թագաւորը հաճեցաւ սրբոյ Մաւրիկիոսի և Ղազարու կարգին ասպետական խաչանշանը շնորհելու Թորոնտոյեան յարգոյ սինեօր Ճիովանիին 'ի վարձատրութիւն մեծամեծ ծառայութեանցը, զորս այս վերջին տարիներս մատոյց մետաքսի մշակութեան զարգանալուն Իտալիոյ մէջ։

—Մեծարգոյ մօսիւ Լուի Բիննա ասպետը, որ Իզմիրի մէջ Իտալիոյ նախորդ ընդհանուր հիւպատոսն էր, և իւր հայասէր ազնիւ բնաւորութեամբը ծանօթ է մեզմէնց, երեք տարիի չափ Կոստանդնուպօլսոյ ընդհանուր հիւպատոսի պաշտօնը վարելէ ետև, այժմ նոյն պաշտօնիս ճէզայիր պիտի երթայ։

—Եղիպտոսի կառավարութիւնը Սինատինօ և Բոսթրէ սեղանաւորաց ձեռօք, մէկ միլիոն 500 հազար լիրայի փոխառութիւն մի ըրեր է հարուրին 9 տոկոսով և հարուրին մէկ քօմիսիոնով։ Այս փոխառութիւնը երկու տարուան մէջ պիտի հատուցուի։

—Լոնտոնի Դրամանոցը՝ հեռադրական լրոյ համեմատ, իւր դրամագլուխը հարուրին 4ուկէսի իջեցուցեր է։

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նւրոպայէն հասած լուրերը խիստ անյաջող են բամպակաց համար. հետևաբար Իզմիրի մէջ ևս գժուարավաճառ են այժմ և գիները 580էն մինչև 900 ղուրուշ են ըստ տեսակին։ Այս շաբթու 750 հակի չափ վաճառեցաւ, և քաղաքիս մէջ դրեթէ 7000 հակ պատրաստ ապրանք կը գտնուի։ Տորոնին (քէօքպոյա) գիները 225—250 ղուրուշէ կենդինարը ըստ տեսակին։ Այս շաբթու 4000 կենդինար փալամուտ ծախուեցաւ 76—87ի կենդինարը ապրանքին աղտորութեանը համեմատ։

ՆՈՐ ՊԱՆԳՈԿ

Իմաց կը տրուի հասարակութեանը թէ ծովեզերքը Պայրաճիին իսքելէն նոր պանդոկ(լօքանտա) մի հաստատուեցաւ ԻՕՆԻԱ անուամբ, ընդ վերատեսչութեամբ քիր Տիմիթրի Բուսմուրային. որ շատ ժամանակէ հետէ Ասիա կոչուած պանդոկը կը կառավարէր։

Այս նոր պանդոկը եկողները մեծապէս գոհ պիտի ըլլան թէ՛ բաղաքավարական ընդունելութենէն, թէ կերակրոց մաքրութենէն ու համեղութենէն, և թէ՛ վերատեսչին բազմամեայ փորձառութենէն։

ՋԱՐՄԱՆԱԼԻ ԴԵՂ ՄԻ

Սպէղանի Թուվէյայի Հոլօուէյ։

Գ'ըսեն թէ մարդկային մտաց ամեն արտադրութիւնները ժամանակ մը տևելէ ետև, նոր գիւտեր անոնց տեղը կը բռնեն։ Բայց այս խօսքը այս դեղին չվերաբերիր. վասնզի օրուան մը համար չէ, այլ մշտատև է անոր ներգործութիւնը. ըստ որում արեան մէջ եղած հիւանդութեանց արմատները կը ջնջէ և բժշկութեան արհեստն ալ անկէց աւելի բան մը չկրնար ձեռք բերել։ Այս սպեղանին մտքի և մարմնոյն մաքրութիւններուն մէջէն անցնելով, ինչպէս որ ջուրը ծակալից բանէ մը կանցնի, կերթայ կը գտնէ խոյլ պարանոցի, օձիկ, ուռոյգք և քաղցկեղ ըսուած ախտերուն արմատը, նմանապէս գէշ վիրաց և պալարներու ճացորդաց որ արեան շրջաբերութիւնը կաւրեն, և անոնց ապականութիւնը անհետ կընեն։

Ցաւ սրունից։

Հոլօուէյի սպեղանին ամեն դէպքերու մէջ կը բժշկէ սրունից (պալորը) ցաւերը թէև քսան տարուան ըլլայ։ Որչափ կարծր գունաթափ և ուռեցած ըլլայ մարմինը, այս ա՛սոր չկրնար դիմանալ, եթէ յիշեալ սպեղանին օրը երկու անգամ առատապէս դրուի ցաւած տեղը և աղեկ մը շփուի։ Յետոյ նոյն սպեղանիէն լաթի մը վրայ շատկէկ քսելով ցաւած տեղը ծածկելու է։ Այս կերպիւ եթէ շարունակ հոգ տարուի վատառողջ հիւթերը դուրս կելլեն. վերքերը քիչ ժամանակուան մէջ յարմարագոյն նիստի կը բժշկուին և սրունից միւս տեղերը իրենց բնական երևոյթը դարձեալ կը ստանան։

Հին վէրք, խոց և քաղցկեղ։

Խոյլ պարանոցի, և ուրիշ խոցերը, որչափ և հնացեալ ըլլան, շուտով կը բժշկուին Հոլօուէյի սպեղանիով. որ իւր ներգործութեամբը երևելի հանդիսացաւ նաև անդամալուծութեան շատ դէպքերու մէջ։

Տեռատեսութիւն։

Այս սպեղանին տեռատեսութեան (մայսրլ) ամենէն վատագոյն դէպքերը կը բժշկէ, եթէ գործածէն զայն՝ ինչպէս որ պատուիրեալ է ծանուցագրոյն մէջ։

Մարթային հիւանդութիւնք։

Խոզաւարտները (գապարտիկ), շրջ արատոս յարձակումները և մորդոյս մորմոյն ամեն գրգռութիւնները անհրաժեշտ կըլլան քանի մը անգամ այս սպեղանին քսելով։ Դուրս տալը ովքերոց բաւական արտաշնչութեան պակասութենէն կը գալանձուի, և ըստ որում այս սպեղանին ներս մտնելով կը բանայ անմիջապէս մորթային ծակտիկը և կը դրաւէ զարգացումը՝ սա կերպիւ հիւանդութիւնը անդարձ կը լլայ։ Այն սիկիները, որոց երեսը և բազուկները տգեղացեալ են մորթային հիւանդութիւններով, կրնան առանց ամաչելու գործաբար դեղը գործածելով. շուտով անհետ ընել նոյն տգեղութիւնները և դարձեալ ձեռք բերել մարթոյն բնական գոյնը և կակղութիւնը։

Այս սպեղանին յատկապէս օգտակար է հեռաւեալ ախտից։

Ուռոյգք։ Քաղցկեղ (շիրիբէնչէ)։ Կտրուածք։ Գելուձն կամ կծկումն մկանաց կամ ջլաց (սինիր չէքիլմէսի)։ Կոշտոտից (նսրը)։ Խօթութիւնք մորթոյ։ Յօդացաւութիւն։ Խաղաւարտ (չպան)։ Ջրգողութիւն (սըրգա)։ Ներեարեան և լանխոր վերք (ֆիսթիւլ)։ Ոտնացաւութիւն (նիգրիս)։ Սերմնակաթութիւն (պէլ սովուքլուղու)։ Քոս։ Լեռդի հիւանդութիւնք։ Խոյլ պարանոցի։ Ցաւ պարանոցի։ Ափրոդիտեան ախտք։ Դողդոջ ցաւագին (թիք տուլուրէս)։

Այս սպեղանին, որ կը շինուի զանոնք գանօղին անձնական վերակացութեամբը, անոր ընդհանուր գործարանաց մէջ կը ծախսուին 'ի Լոնտոն Սէրէն կոչուած թաղը թիւ 244. և 'ի Նոր Եորք Մայսէն Լէն թաղը թիւ 80։ Իսկ ուրիշ երբեք, իւր գործակալաց քով կը գտնուին. որոց անունները հետևեալներն են. Իզմիր՝ Իքսար Փրէր, Կոստանդնուպօլիս Ա թամրա և Ֆ. Տէլլասուտա, Աղեքսանդրիա՝ Ֆ. Բէրրին. Վամայէ՝ Կայլարաի. Բէյրութ Կղէն Ճ. Սթիերոֆչ. Մալթա՝ Է Սիրիչ, Պէքրէշ Էլիզա Վուլպայ։

Խմբագիր—տէր լրագրոյս,
Գ.—Լոս Գ. Պալէրալրէան։

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ